«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում.

Դաստիարակ՝ Աննա Իսրայելյան

Մանկապարտեզ՝ «Ծիածան»

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2

ՏԵՍԱԿԱՆՄԱՍ

ԳԼՈՒԽ 1. 5

1.1 ԸՆՏԱՆԻՔԻ և ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.....3

1.2ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ.....2

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ2.....6

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....1

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ.....1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Դժվար երեխայի հանդեպ դաստիարակի և նույնիսկ կոլեկտիվի անզորության պատճառը թաքնված է ոչ թե այն բանում, որ այդ սանը անուղղելի է, այլ նրանում, որ դաստիարակության գործընթացը կեղծ ճանապարհով է գնում, դաստիարակը ձգտում է միայն արմատախիլ անել արատները, լավագույն դեպքում կանխել դրանց առաջացումը: Փորձը ցույց է տալիս, որ այդ ճանապարհով չի կարելի դաստիարակել կայուն բարոյական համոզմունքներ: Դպրոցում գտնվելու առաջին օրվանից պետք է կարողանալ տեսնել և անդուլ կերպով զարգացնել, ամրացնել երեխայի մեջ եղած ամեն լավը»[16]:

Վասիլի Ալեքսանդրովիչ Սուխոմլինսկի

Մարդու կյանքում զարգացման բոլոր փուլերը փոխկապակցված են, և ամեն բան սկսվում է մանկությունից: Այն ինչ երեխան ձեռք է բերում, ուղղեկցվում է ողջ կյանքում: Կյանքի սկզբնական շրջանում զարգանում է, ընկալում աշխարհն ու արձագանքում արտաքին միջավայրին ՝ իրեն շրջապատող մեծահասակների միջնորդությամբ: խնամող մեծահասակները նպաստում են աշխարհաճանաչմանը և հմտությունների ձեվավորմանը: Յուրաքանչյուր երեխա անկրկնելի է իր տեսակի մեջ, մարդիկ տարբեր են, տարբեր են նաև երեխաները:Դաստիարակությունը չափազանց պատասխանատու գործընթաց է, երեխային ուղղորդելու համար անհրաժեշտ է հասկանալ նրան, այս ամենը պատկերացնելու համար կարևոր է սիրել ու զգալ երեխային, ամբողջ սրտովվստահել և հավատալ նրան:Երեխայի նկատմամբ մարդասիրական վերաբերմունքը նշանակում է ուսուցչի կողմից այն պարզ ու իմաստուն ճշմարտության ըմբռնումը, որ առանց երեխայի ներքին հոգևոր ջանքերի, առանց նրա լավը լինելու

ցանկության, անիմաստ է դպրոցը, անիմաստ է դաստիարակությունը:Մանկության հիմքում ընկած է երեխային ճանաչելու կարևորգույն սկզբունքը,որին կարող է օգնել ընտանիքի հետ համագործակցությունը:համագործակցությունը երեխայի շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ ընտանիքը և ուսումնական հաստատությունը համատեղ աշխատում են երեխայի դաստիարակության ուղված նպատակներին հասնելու համար:Ընտանիքի և մանկավարժի համագործակցության կենտրոնում երեխան է: Ըստ կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերի պահանջների՝ դաստիարակը պետք է համագործակցի սաների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ:ՈՒզում եմ նշել նաև այն,Երբ խմբում կա հատուկ մանկավարժահոգեբանական կարիք ունեցող երեխա, ապա խմբի երեխաները դառնում են հոգատար ու կարեկից, հետո այդ երեխաները նաև կարեկից ու հոգատար են դառնում իրենց ընտանիքում և շրջապատում :

Թեմայի արդիականությունը_ հետազոտական աշխատանքի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ընտանեկան դաստիարակությունը ենթարկվում է փոփոխության, հետևաբար արդիական է դառնում ընտանիք մանկապարտեզ համագործակցությունը, որը կարող է ազդել աշխատանքի արդյունավետության վրա:

Նպապատակը_ Ծնողների հետ համագործակցելով բացահայտել ու բարելավվել երեխաների առավելությունները , զագացնել թույլ կողմերը, մանավանդ երբ խմբում կան նաև ներառական երեխաներ:

Խնդիրները_բացահայտել և վերլուծել մանկավարժի և ընտանիքի համագործակցթության աստիճանը՝ ճանաչողության, դաստիարակության և կրթության խնդիրերի լուծման համար:

ԳԼՈՒԽ 1

1.1 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը

Ընտանիքը երեխայի սոցիալականացման առաջին օղակն է, որտեղ նա ճանաչում է ինքն իրեն և ձևավորվում որպես անհատ: Երեխայի սոցիալականացման երկրորդ օղակը նախադպրոցական ուսումնական հաստատությունն է, որտեղ երեխան շփում է հաստատում դաստիարակների և հասակակիցների հետ: Երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման համար կարևորում է մանկավարժական աշխատողի համագործակցությունը սանի ծնողի (օրինական ներկայացուցչի) հետ, որը նպաստում է ծնողի անմիջական մասնակցությամբ մանկապարտեզում կրթական աշխատանքների, ինչպես նաև ընտանիքում սանի ճիշտ դաստիարակության կազմակերպմանը: :
Ընտանիքները որոշիչ դեր ունեն ներառական կրթության գործընթացում: Նրանք ականատեսն են երեխայի մանկապարտեզից, տարրական դպրոց, տարրական դպրոցից միջին, ապա ավագ դպրոց փոխադրմանը: Ընտանիքի ներգրավվումը **կրթական գ**ործընթացում տրամաբանական է և արդյունավետ: Ընտանիքի հետ աշխատելիս էապես կարևոր է զարգացնել այնպիսի հարաբերություններ, որոնք տարբերվում են անցյալում եղած հարաբերություններից: Ներառական կրթության համատեքստում ընտանիքի և երեխայի կարիքներն ու տեսակետներն կարող են բնութագրվել նրա խորապես ճանաչող մասնագետների կողմից: Ընտանիքի հետ հարաբերությունները հաստատելու համար կարևոր են երկխոսություններն ու սերտ շփումները:
Նախադպրոցական ուսումնական հաստատության և ընտանիքի համագործակցությունը սաների բարելավման անհևաժեշտ մաս է կազմում : Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետը իրենց երեխայի մասին: Այդ իսկ պատճառով մանկապարտեզը շահում է երեխայի դաստիարակության և կրթության հարցում, ծնողները ինչ- որ չափով լրացնում են այն

բացերը, որը պետք է սաների դաստիարակության հարցում:

Ծնողների հետ ցանկացած շփման ձև պետք է զուգակցել նրանց նկատմամբ ցուցաբերած հարգանքով : Ծնողների հետ համագործակցելով շատ բան կարելի է իմանալ իրենց երեխաների մասին, քանի որ նրանք ավելի լավ գիտեն երեխաների թերի և լավ կողմերը, մանավանդ երբ խմբում կա հատուկ մանկավաժահոգեբանական կարիք ունոցող երեխաներ: Համագործակցության շնորհիվ թե՛ ծնողները թե՛ դաստիարակը տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հմտությոնների և հետաքրքրասիրությունների մասին: Իսկ դրական արդյունքի հասնելու համար դաստիարակը և ծնողը պետք է համատեղ
աշխատեն : Յուրաքանչյուր ծնող պետք է գիտակցի իր ակտիվ մասնակցության և անհրաժեշտության դերը երեխային կրթելու և դաստիարակելու գործընթացում: Երեխայի մանկապարտեզ հաճախելը չի խանգարում ընտանեկան միջավայրում կրթելու դաստիարակելու զարգացնելու պարտավորությունից, իսկ դաստիարակին օգնում է ընտանեկան դաստիարակությունն ու կրթությունը:

Նախադպրոցական հիմնարկները ընտանիքի հետ աշխատանք կազմակերպելիս օգտագործում են տարբեր ձևեր :

- Այցելություն տուն - երբ դաստիարակը այցելում է երեխային ավելի լավ ճանաչելու և նրա ընտանեկան պայմանները տեսնելու նպատակով:
- Այն ժամանակահատվածը - երբ երեխային բերում և տանում են նախադպրոցական մանկավարժական հաստատությունից:
- Հեռախոսային զանգեր - որոնք պաշտոնական են և նպատակ ունեն քննարկելու երեխայի առաջադիմությունները և ծնողներին հնարավորություն են տալիս կիսելու իրենց գաղափարները , առաջարկները և մտահոգությունները , իսկ եթե ժամանակը չի բավականացնում հարցերը քննարկելու համար, ապա գործում են գրավոր հաղորդակցման ձևեր , դրանցից են՝

- Ոչ պաշտոնական գրություններ - երբ երեխայի հետ տուն են ուղարկում կարճ գրություն կապված երեխայի հմտությունները և ձեռքբերումները տեղեկացնելու համար:
- Առաջարկությունների տուփեր - երբ ծնողներին առաջարկվում է իրենց մտահոգությունները, հարցերը և առաջարկները գրավոր ձևով ներկայացնել տուփի մեջ, որից հետո մանկավարժները կարդում և քննարկում են :
- Պատի տեղեկատվություն - երբ ծնողները տեղեկանում են երեխաների առորյային՝ դասացուցակ, կարգապահական կանոներ,սնունդ և այլն:
- Շաբաթական գրություններ - երբ ամեն շաբաթ գրություն են ուղարկում, տեղեկացնելով իրենց երեխայի նախընտրելի գործողության տեսակի մասին :

Ծնողների և մանկավարժական աշխատողի միասնական համակարգված պահանջներն ընտանիքում՝ երեխաների պատշաճ դաստիարակության պայմաններից են: Այնտեղ, որտեղ մանկավարժը և ծնողը գործում են համատեղ, ավելի լավ է տարվում երեխայի դաստիարակչական աշխատանքը: Նախադպրոցական տարիքի երեխայի լիարժեք դաստիարակությունը տեղի է ունենում ընտանիքի և նախադպրոցական հաստատության միաժամանակյա ազդեցության պայմաններում: Իսկ մանկավարժական աշխատողը, որպես կանոն, նման դրական դերում ընդունվում է որպես կրթության իրավահավասար գործընկեր, ում վստահում են, լսում խորհուրդները:

1.2 ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ծնողական ժողովները դրանք այն պաշտոնական հանդիպումներն են, որոնց շրջանակներում լուծվում են կազմնակերպչական խնդիրները, ծնողները ստանում են տեղեկատվություններ երեխաների ուսումնական գործընթացի,նրանց վարքի և առաջադիմության մասին, քննարկում են երեխաների առաջադիմությունը , որը ծնողներին հնարավորություն է տալիս կիսելու իրենց գաղափարներն ու մտահոգություններն: Ժողովները կարող են օգտակար լինել երեխաների հետ աշխատանքի անհատական պլանների կազմման և քննարկման համար:

Ծնողական ժողովներն անցկացվում են խմբային և ընդհանուր ձևով: Ընդհանուր ծնողական ժողովում քննարկման են դրվում հարցեր, որոնք կապված են երեխաների կյանքի և առողջության պահպանման, կրթական-դաստիարակչական խնդիրների հետ: Դրանք անցկացվում են տարեկան երեք անգամ, անհրաժեշտության դեպքում կարելի է անցկացնել արտահերթ ժողով:

Խմբային ծնողական ժողովը ծնողների կողմից տվյալ տարիքի երեխաների դաստիարակության խնդիրներին, բովանդակությանը և մեթոդներին ծանոթանալու, ինչպես նաև մանկավարժական գիտելիքների պրոպագանդման գործարար ձև է:

Դաստիարակի խնդիրն է ոչ թե ծնողներին սովորեցնել, այլ նրանց հետ կիսել աշխատանքի տարիների ընթացքում կուտակված երեխաների դաստիարակության փորձը, քանի որ իր աշխատանքի բնույթով ուսուցիչը ավելի շատ գրականություն է կարդում կրթության մասին, քան ծնողները և իր հաղորդակցման շրջանակը: Ծնողներին պետք է ծանոթացնել կրթական աշխատանքի հիմնական ոլորտներին, որպեսզի նրանք հասկանան ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության կարևորությունը: Ընտանիքի անդամներին տեղեկություններ են տրամադրվում երեխաների հետ իրականացվող աշխատանքների և երեխաներից ունեցած ակնկալիքների վերաբերյալ: Ծնողներին պետք է տեղյակ պահել , թե ինչպես կարող են նրանք շարունակել աշխատանքները տանը:

Հաճախ ծնողների հետ աշխատանքը սահմանափակվում է ծնողական ժողովների կազմակերպմամբ, որոնք կրթական նշանակություն չեն ունենում, թեև ուսումնական պլանի

համաձայն պետք է նախատեսվեն ուսուցողական զեկուցումներ երեխայի զարգացման այս կամ այն թեմայի վերաբերյալ: Ծնողների հետ աշխատանքը պետք է իրականացվի կազմակերպված, նախնական պայմանավորվածությամբ, որպեսզի այն ձևական բնույթ չկրի և արդյունավետ լինի բոլոր կողմերի համար: Ուսումնական հաստատության աշխատակազմի և ընտանիքների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություններ կառուցելու համար էական նշանակություն ունեն հարգանքը և վստահությունը երեխայի և նրա ընտանիքի անդամների հանդեպ: Ծնողական ժողովների և ընտանիքի անդամների հետ այլ հանդիպումների ընթացքում դաստիարակն անպայման պետք է անդրադառնա երեխայի համակողմանի զարգացման կարևորությանը և առանձին ներկայացնի զարգացման յուրաքանչյուր ոլորտն ըստ տվյալ տարիքի երեխաների զարգացման չափորոշիչների: Երեխայի զարգացման առաջընթացի ու կարիքների վերաբերյալ քննարկումներն ու տեղեկությունների փոխանակումը օգտակար են և ՝ընտանիքի անդամների, և՝ դաստիարակների համար:

Զրույցը նպատակահարմար է սկսել դրականից, որպեսզի ծնողը համակրանքով ու հավատով լցվի դաստիարակի նկատմամբ: Խոսակցության ընթացքում դաստիարակը պետք է առանց ավելորդությունների, խորհուրդներ տա ծնողին երեխայի դաստիարակության վերաբերյալ:Պետք է ամեն ինչ անել, որպեսզի հայրերը և մայրերը հավատան դաստիարակին և լսեն նրա խորհուրդները: Ուստի ծնողական ժողովում միշտ անհրաժեշտ է վստահության մթնոլորտ ստեղծել:

Ծնողական ժողովների տեսակները

- Կազմակերպչական
- Թեմատիկ
- Ամփոփիչ

ԳԼՈՒԽ 2

Գործնական աշխատանք

Ինտեգրված դասի պլան

Տևողությունը 40 րոպե

Խումբ՝կրտսեր խումբ, ծնողների մասնակցությամբ

ԹԵՄԱ՝ համագործակցություն , Խնկո Ապեր «Պապն ու շաղգամը»,

Արվեստի կենտրոններ:

Նպատակը ՝

- Ծնողներին հասու դարձնել մանկապարտեզի առօրյա աշխատանքին :
- Ծնողների մոտ ձևավորել ապրումակցում մանկավարժ_երեխա փոխհարաբերություններում:
- Համագործակցելով ի՞նչ արդյունքի հասանք
- Հատուկ մանկավարժական կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու առանձնահատկությունների կիրառում:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ծնողները կծանոթանան երեխաների մանկապարտեզի առօրյային, կրթության կազմակերպման ձևերին:
- կգնահատեն մանկավարժի բարդ՝ միաժամանակ հաճելի աշխատանքը:
- համագործակցելով երեխաները, ծնողները և մանկավարժը կհասնեն դրական արդյունքի :
- կսովորեն նոր բառեր՝ շաղգամ , համագործակցություն:Կծանոթանան հեղինակին:

ՆՅՈՒԹԵՐ՝ պապիկի բեղեր, տատիկի գոգնոց, մկնիկի, փիսիկի, շնիկի շորեր Ա4 թղթեր, գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, պլաստիրին, ընկույզի կեղեվներ, կոճակներ, թելեր, նկարներ :

ՄԵԹՈԴՆԵՐ՝ մեծ խմբերով, փոքր խմբերով, քառաբաժան, կմախքի մեթոդ , խոսող փայտիկ :

Ընթացքը

ԽԹԱՆՈՒՄ՝ Նախ ծնողներին կմախքի մեթոդով տալ հարցեր,որպեսզի կատարեն 5 րոպեանոց շարադրանք ՝

1. ի՞նչ սպասելիքներ ունեք երեխաներին մանկապարտեզ ուղարկելով:
2. Ձեր պատկերացումները մանկապարտոզի առօրյայի մասին:

Հետո երեխաներին ցուցադրել պապիկի, տատիկի, թոռնիկի, շնիկի, փիսիկի, մկնիկի և շաղգամի նկարները, երեխաները կտան նկարների անվանումները:

Երեխանե'ր մենք պիտի օգնենք պապիկին , բայց ինչպե՞ս

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ ՝ կարդալ հեքիաթը ընդհատումներով, ընթացքում տալ հարցեր՝ ու՞մ կանչեց պապիկը, ցուցադրել տատիկի նկարը , երեխաները ասում են տատիկին, և այդպես հարցերով և նկարներ ցուցադրելով կարդալ մինչև վերջ: ԿՇՌԱԴԱՏՈՒՄ՝ Այսօր մենք պիտի համագործակցելով (մեկս մյուսին օգնելով) շաղգամը հողից հանենք , իսկ ծնողները մեզ կօգնեն :

Դերային խաղ _ ծնողներից մեկը դառնում է շաղգամ, մեկը պապիկ՝ դնելով բեղեր, մեկը տատիկ՝ գոգնոց հագած , մյուսները հագնում են շնիկի, փիսիկի, մկնիկի շորեր և համագործակցում են,որպիսզի շաղգամը հողից հանեն, բայց մեր շաղգամը շատ մեծ է, դրա համար մեզ շատ մկնիկներ են պետք, կանչում ենք երեխաներին, որպիսզի բոլորը մասնակցեն դասին, իսկ վերջում գալիս է հատուկ մանկավարժահոգեբանական կարիք ունեցող երեխան , որպես ամենաուժեղ մկնիկ,երբ բոլոր մկնիկները միանում են և համագործակցում են, շաղգամը հողից հանում են:

Խաղ ՝ ճանաչիր շոշափելով - երբ մայրիկը աչքերը փակ կճանաչի և կզագա իր երեխային փոքր խմբից:

Գուշակիր ու՞մ ձայնն է _ երբ մայրիկը պետք է աչքերը փակ գուշակի իր երեխայի ձայնը:

ԱՇԽԱՏԱՆՔ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ - բաժանվել երեք խմբի՝ ամեն խմբում ծնողները համագործակցում են երեխաների հետ:

1-ին խումբ՝ այլընտրանքային ապլիկացիա_ կոճակներով և թղթերով ստանալ շնիկներ, փիսիկներ:

2- րդ խումբ՝ այլընտրանքային ծեփ ստանալ մկնիկներ ընկույզի կեղեվներից և պլաստիրինից

3 -րդ խումբ՝ թելերը սոսնձելով նկարեներին ստանալ հեքիաթի հերոսներին:

Ներկայացնում ենք աշխատանքները և քննարկում , վերջում մեծ պաստառ ենք հավաքում աշխատանքներով : Ամփոփելով ասում ենք հանագործակցելով մենք կարողացանք հողից հանել շաղգամը և ունեցանք մեծ պաստառ՝ վերնագրված ծնող,երեխա, մանկավարժ համագործակցության արդյունքը:

Վերջում կիրառել քառաբաժան մեթոդը ծնողների հետ

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ զգացի	Ի՞նչ սովորեցի և հասկացա:

Ի՞նչ գույն ուներ այսօրվա մեր դասը ըստ Ձեզ:

Ծնողները մեր դասին տվեցին ծիածանագույն:

Պարապմունքի ժամանակ ներկա էին տնօրենը, մյուս դաստիարակը և Սպիտակի ՏՄԱԿ -ի ներկայացուցչներ՝ լոգոպետը և հոգեբանը , որոնք դիտարկեցին պարապմունքը և հայտնեցին իրենց կարծիքները:

Դաստիարակը հասավ իր առջև դրված նպատակներին կիրառելով բազմազան մեթոդներ : Բոլոր երեխաներիը մասնակցում էին դասին հետաքրքված էին նաև ծնողները : Աշխատանքներն ուղված էին երեխաների խոսքի, հիշողության, մատների մոտորիկայի, ստեղծագործելու ունակության կարողունակությունների զարգացման համար: Պարապմունքի ժամանակ ոգևորված և ուրախ էին թե՛ երեխաները, թե՛ ծողները: Հետաքրքիր էր աշխատանքը, երբ համագործակցում էին ծնող, երեխա և մանկավարժ: Հաճելի էր տեսնել ոչ միայն մայրիկերի ներկայությունն, այլ նաև հայրիկերի և տատիկների ներգրավվածությունը դասին:

Դաստիարակի կողմից հետազոտվող թեման կարևոր էր նախադպրոցականի ուսուցման և դաստիարակության հարցում և միտված էր ծնող- մանկավարժ համագործակցությանը, որի արդյուքն արդեն իսկ ակնհայտ էր: Աշխատելով ծնողների հետ երեխաների մի մասը դարձան ինքնուրույն կարողացան արտահայել իրենց մտքերը ,լսեցինք նաև ծնողների կարծիքները և առաջարկությունները գրառումներ կատարեցին դասի վերաբերյալ : Հուսով եմ եմ, որ այս համագործակցությունն կլինի շարունակական

: 

Կարծիքներ հայտնեցին նաև Սպիտակի ՏՄԱԿ-ի ներկայացուցիչները:



https://www.facebook.com/100066795847278/videos/920042062382208?locale=hy_AM

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Երբ ծնողներն իրենք են սահմանում երեխայի մոտ որևէ կոնկրետ կարողություն դաստիարակելու կամ սվորեցնելու խնդիրները և դրանք լուծելու քայլերը՝ կանոնները, ավելի պատրաստակամ և հետևողական են այդ կանոնները պահպանելու և մանկավարժի հետ այդ ուղղությամբ համագործակցելու հարցում:

Քանի որ մենք ապրում ենք գյուղական բնակավայում և ճանաչում ենք միմյանց կարողացա աննկատ տնայցեր կատարել և ծանոթանալ երեխաների սոցիալական պայմաններին, դաստիարակության ձևերին, ազատ խոսք արտահայտելու կարողություններին: Արդյունքում տեսա ընտանիքներ, որտեղ երեխաներին տալիս են գերխնամք, որի արդյունքում երեխան չի կարողանում ինքնասպասարկվել : Տեսա ընտանիքներ, որտեղ երեխայի խոսքը անտեսում են և կարևորություն չեն տալիս : Եվ տեսա ընտանիքներ , որտեղ երեխան իրենց կենտրոնում է և նրան տալիս են բավականին ջերմություն, դաստիարակություն, կրթություն, որը օգնում է մանկավարժին իր աշխատանքում: Համագործակցության արդյունքում կատարվեցին երկխոսություններ, որի արդյունքում մենք ունեցանք դրական աստիճան կրթության և դաստիարակության հարցում:

Գրականության ցանկ

1. Նախադպրոցական մանկավարժություն. Բուհական դասագիրք, հեղ.՝Ս.Մարության, Ա.Դալլաքյան,Երևան 2008թ.

2.Միտոյան Հ., Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, Երևան 2020թ

3. Դաստիարակի ուղեցույց. Այլընտրանքային մոդելերով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, էջ 82, Երևան 2010

4.''Մասնակցային գործընթացը կրթության հիմքերում''ծրագրի շրջանակներում իրականացված նախադպրոցական հաստատությունների մոնիթորինգի զեկույց, Մանկական զարգացման հիմնադրամ, Երևան 2017

5. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումը այլընտրանքային մոդելներով. Դաստիարակի ուղեցույց, Երևան 2018

6.https://hy.wikipedia.org/wiki/%D5%8E%D5%A1%D5%BD%D5%AB%D5%AC%D5%AB_%D5%8D%D5%B8%D6%82%D5%AD%D5%B8%D5%B4%D5%AC%D5%AB%D5%B6%D5%BD%D5%AF%D5%AB

7.http://edu.nk.am/2021/08/23/

8.ՆՈՒՀ կանոնադրություն